Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 327-L որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2020 թվականի N _____ L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի

N 327-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 327-L որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները.

- Հավելվածի 25-րդ կետում «խմբերի» բառից հետո լրացնել «՝ մինչև 21 ամսական բեղմնավորված» բառերը։
- Հավելվածի 27-րդ կետի ՝

ա. 2-րդ ենթակետի «ժգ.» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժդ.» պարբերությամբ՝

«ժդ. տոհմային կենդանիների ձեռքբերումը, ներմուծման դեպքում նաև ներկրումը իրականացվում է վարկը հաստատելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում (Նախարարության համաձայնությամբ տոհմային կենդանիների ձեռքբերումը, ներմուծման դեպքում նաև ներկրումը, կարող է երկարաձգվել ևս մեկ ամսով)»։

բ. 4-րդ ենթակետում «հետո» բառից հետո լրացնել «՝ մեկամսյա ժամկետում» բառերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ